


087.1

2-33

23 JUN 2009

ԶԵՆՅՈՒՍԿԻՆ



0.87.1
9-33

ՊԵՏՐՈՍ 1935 ՅԵՐԵՎԱՆ


18 JUL 1935

115

087.1
9-33

48

ՉԵԼՅՈՒՍԿԻՆ




975
34205
1001

ՄԵՏՆԱՐ 1935 ՅԵՐԵՎԱՆ



Նկարիչ՝ Ս. Քարյան
 Քարգամեց յեկ լրացրեց՝ Գ. Սարյան
 Տեխ. խմբագիր՝ Տ. Խաչվանյան
 Սրբագրիչ՝ Ս. Շահբաղյան

Պետհրատի տպարան—Ցերեան
 Գլավիտ 8715, Հրատարակչ. 3149
 Պատվեր 1514, տիրոժ 5000




Ս Ե Կ Ն Ո Ւ Մ

1 933 թվի հուլիսի 16-ին Լենինգրադի նավահանգստում պատրաստ կանգնել էր «Չեչյուսկին» շոգենավը: Այդ նավը գիտական մի մեծ արշավախումբ պետք է տաներ: Արշավախումբը գնում էր դեպի հյուսիս՝ ուսումնասիրելու խորհրդային արկաթիկան, նրա բուսականութունը, կենդանական աշխարհը, մթնոլորտային պայմանները, բնական հարստությունները և նշյուսայն ուղիները, վորով նավարկելու յեն հետազայում խորհրդային նավերը:

Հարյուրավոր բանվորներ աշխատում էին շոգենավի վրա: Նրանք դարսում էին ուտելիքով լի բազմաթիվ արկղեր, հագուստեղենի ահագին հակեր, քարածուխի, ալյուրի ահագին բեռներ: Չե՞ վոր նրանք յերկա՛ր, շատ յերկար ժամանակ պետք է գնային նավով: Այդ պատճառով էլ նավի վրա աշխատանքը յեռում էր:

Արդեն նավահանգստում էին գիտական արշավախումբը և նրա հետ մեկնող բոլոր ընկերները: Ահա և լավեցին նվազախմբի ու յերգերի աշխույժ ձայներ: Այդ Լենինգրադի բազմահազար բանվորների ու աշխատավորների շարքերն էին: Նրանք գալիս էին «Չեչյուսկինին» ճամբու դնելու, նրան հաջողություն մաղթելու:

Յերբ բոլոր բեռները տեղավորվեցին, նավի վրա բարձրացան գիտական արշավախմբի անդամները և բոլոր ընկերները՝



102 հոգի: «Չեյլուսկինը» սուլեց: Նավահանգստում թնդաց նվազախումբը: Հնչեցին յերգեր և ուռաներ: Դեպի ուղևորները նետվեցին հազարավոր զվարթ հայացքներ և ծաղկեփնջեր:

Արչավախմբի պետ ընկ. Շմիդտն առաջացավ: Նա վողջունեց բանվորներին ու աշխատավորներին: Նա ասաց, վոր չմոռանաք մեզ: Նորից հնչեց նվագախումբը: Նորից լավեց «Չեյլուսկինը» սուլոցը և նավը շարժվեց՝ տանելով յերկրի հերոսներին:

ՈՐԵՐ, ՇԱՐԱՔՆԵՐ ՈՒ ԱՄԻՍՆԵՐ

Զո՛ւր, ջո՛ւր, ջուր... անվերջ ու անսահման:

«Չեյլուսկինը» պատռում էր ջուրը և առաջ սահում: Հմուտ նավապետ Վորոնինը ուշադիր հսկում էր նավի վրա: Շմիդտը և իր ընկերները նավասենյակում շարունակում էին իրենց գիտական փորձերը: Մնացած բոլոր ընկերները կատարում էին իրենց հանձնված աշխատանքը: Իսկ ռադիստ ընկերները ժամ առ ժամ հաղորդում էին ամբողջ աշխարհին «Չեյլուսկինը»-ի դրուժյան և ուր լինելու մասին: Այդպես որեր ու շաբաթներ էին անցնում: Ամբողջ աշխարհի թերթերը գրում էին «Չեյլուսկինը» արչավախմբի մասին: Հետաքրքրվում էին նրանով: Իսկ բոլոր մարդիկ ուշադիր ու սրտատրուփ հետևում էին՝ թե ինչով պիտի վերջանա այս բոլորը, վաղը ի՞նչ նոր բան կկարգան թերթերում այդ մասին:

Իսկ «Չեյլուսկինը» առաջ էր շարժվում, մտնում էր ծովից ծով և շուրջը միայն ջո՛ւր էր, ջո՛ւր, ջուր...


ԱՌԱՋԻՆ ՍԱՌՈՒՅՑՆԵՐԸ

Ոգոստոս ամսին, յերբ «Չեյլուսկինը» նավը դեռևս խաղաղ առաջ էր ընթանում, մեկ-մեկ ծովային տարրորինակ կենդանիներ էին յերևում ծովի վրա, լողում, նորից մտնում ջրի տակ, նորից յելնում ու կարծես դարձացած նայում էին այդ տարրորինակ «գազանին»՝ «Չեյլուսկինին»:

Բայց ահա յերևացին բեռուային ծովերի առաջին սառույցները: Սառույցի ահագին բեկորներ լողում էին ջրի յերեսին: Բայց նավը առաջ էր ընթանում:

Շուտով «Չեյլուսկինը» վրայից ջուրը գցեցին փոքրիկ մակույկներ և մի քանի հետախույզ բրիգադներ նավարկեցին առաջ իմանալու թե ինչ վիճակի մեջ է ծովի շարունակութունը: Յերբ բրիգադները վերադարձան, «Չեյլուսկինը» կրկին շարունակեց ճանապարհը: Գնալով ծովը ավելի ու ավելի սառցապատ էր դառնում: Գնալով նավը ավելի ու ավելի դժվարությամբ էր շարժվում: Բայց և այնպես շարժվում էր պատռելով սառույցը, ճամբա հարթելով իր համար: Այդպես շաբաթներ ու ամիսներ էին անցնում: Յեվ վորքան ծովի խորքերն էին դնում, սառույցը այնքան ավելի հաստանում էր: Մի տեղ նավը, ուր նա համարյա





վրտնաչափերով եր առաջ գնում՝ կանգ առավ և այլևս չեր կարողանում առաջ գնալ: Հարկավոր եր վորոշ տարածության վրա պատուել սառույցը: Հարկավոր եր ճամբա բանալ «Չեյուսկինի» համար: Բոլոր նավորդները բահերով ու քլունգներով իջան սառույցի վրա: Սկսեցին քանդել ու ճամբա բանալ: Ցուրտը սաստիկ եր, աշխատանքը դժվար: Բայց նրանք համառ կերպով քանդում էին ու քանդում: Վերջապես ճանապարհը բացված եր: Նրանք կրկին բարձրացան նավի վրա: «Չեյուսկինը» առաջ շարժվեց: Ճեղքելով սառույցի անհարթ տարածություններ:

Խ ՈՐՏԱԿՈՒՄ

Սա հստակ փետրվարի խիստ սառնամաղ իրերը: Մոռույցի հաստ շերտերը ճոնջում են «Չեյուսկինի» տակ, դիմադրում են նավը դժվար, շատ դժվար ե առաջ շարժվում: Ամենուրեք սառույց ե ու սառույց...

Փետրվարի 13-ին անսպասելի կերպով բուք բարձրացավ: Բուքը սառույցի փշուրները հավաքած խփում ե նավորդների դեմքին ու աչքերին: Սառնամանիքը 30 աստիճանի յեր հասել: Հանկարծ 1 ժամ 20 րոպեյին սառույցները աղմուկով ու շառաչով շարժվեցին «Չեյուսկինի» վրա: Նրանք ճոնջում էին ու շառաչում, սուլում էին, մոնջում ամեհի զազանների նման: Նրանց ուժեղ հարվածը չպրտեց «Չեյուսկինին» տասը մետրի չափ: Մեքենաները դուրս պրծան իրենց տեղերից: Նավի ճախ կողմը շարժվեց: Խողովակները պայթեցին: «Չեյուսկինը» սառույցով լցվեց: Այդ ժամանակ նավապետ Վորոնինը հրաման տվեց:

— Բեռները թափել սառույցի վրա:

Վոչ վոք վոչ բղավեց և վոչ ել վախեցավ: Յուրաքանչյուրը գրավեց իր տեղը և գործի անցավ: Սկսեցին դատարկել ուտելի-դեղնները սառույցի վրա: Դուրս բերեցին վրանները, մորթե վերմակները: Գլորելով դուրս բերեցին նավթի տակառները: Հանեցին ուղիղ-ընդունիչն ու հաղորդիչը:

Այդ բոլորը կատարվեց յերկու ժամում: Այդ միջոցին սառույցները շարժվեցին դեպի «Չեյուսկինի» ցուռկը: Այդ ժամանակ նավապետ Վորոնինը և արշավախմբի պետը հրաման արձակեցին:

— Բոլորդ սառույցի վրա...

Բոլորը սառույցի վրա դուրս յեկան: Ամենից վերջը դուրս յեկավ նավապետ Վորոնինը: Հանկարծ «Չեյուսկինի» յետևի մասը վեր ցցվեց, և նավապետին չպրտեց սառույցի վրա:

Չուրը լցրեց նավը և ողը նրա միջից մղեց ծխանի մեջ: Ողն ել ծխանից դուրս մղեց մուրը: Մուրը ցրվեց «Չեյուսկինի» նավորդների յերեսին սառույցի վրա: Այդ րոպեյին «Չեյուսկինը» ընկղմվեց: Արդեն ժամի յերեք և կեսն եր:


Պ ԱՍՎԱՆՏԱՐԸ

2 «Չեյուսկինի» բոլոր նավորդները փրկվեցին սառույցի վրա:

Չկար միայն մեկը: Միայն մի կոմյերիտական, Բորիս Մադիլևիչը, վոր գոհվեց:

Նա արշավախմբի տնտեսվարն եր: Նա փրկեց ուտելիդեղններն ու թանգարժեք բեռները: Բայց ինքը չազատվեց: Նա հոգում եր, վորպեսզի ամեն ինչ փրկվի: Նա մտածում եր իր բոլոր ընկերների մասին: Վերջին րոպեյին նա ուզեց ցատկել սառույցի վրա, բայց փոխանակ սառույցի վրա ընկնելու, ընկավ տախտակամածի յեզրին: Տախտակամածը կողքի թեքվեց, չորս կողմը գերաններ ու տակառներ էին գլորվում, կոմյերիտական Մադիլևիչը տապալվեց, ճղմվեց և քշվեց ջրի մեջ, սառույցների տակ:





Նրան չհաջողվեց դուրս գալ սառույցի վրա: Նա մեռավ սառույցների տակ ընդհանուրի գործի համար:

Բայց յերբ Մոսկվայում տպագրեցին չեկյուսկինյանների և Խորհրդային Միութան հերոս-ողաչունների ցուցակը, այդ ցուցակում ասված էր.

«Բեկեռային արշավի մեռած մասնակիցը՝ Բորիս Մադելիչիչը պարզևատրվում է կարմիր աստղի պատվանշանով»:

ՃԱՄԲԱՐԸ ՍԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՎՐԱ

Չեկյուսկինյանները խորտակված նավից դուրս յեկան սառույցի վրա: Նրանք 101 հոգի էին:

Բոլորն առաջուց բաժանված էին բրիգադների:

Յուրաքանչյուրին տվել էին անկողին և մորթուց կարած հագուստ:

Գիտական աշխատողները աստղերով վորոշեցին՝ թե ուր է գտնվում իրենց ճամբարը: Բրիգադները բրեզենտյա հինգ վրան խփեցին: Այդ առաջին ոթևանն էր: Այդտեղ, բեկեռային սառույցների վրա, մթության ու փոթորկի մեջ սկսվեց չեկյուսկինյանների կյանքը:

ՌԱԳԻՈՆ ՉԱՂՈՐԳՈՒՄ Ե

Չեկյուսկինյաններն առավոտյան լվացվեցին ձյունով: Այնտեղ, ուր յերեկ կանգնած էր «Չեկյուսկինը», ընկած էին լողացող պարկերը, դուրս էին ցցվել տախտակներն ու արկղերը:

Ռազիստները սառույցի վրա սարքավորեցին անտենան:

Այն ժամանակ արշավախմբի պետ Շմիդտը պատահած դժբախտության մասին ուղարկեց հետևյալ ռադիոգիրը—

«Փետրվարի 13-ին, 15 ժամ 30 րոպեյին ընկղմրվեց «Չեկյուսկինը» Ուելեն հրավանդանից 144

մղոն հեռավորության վրա: Դժբախտությունը չի կասեցնում մեր աշխատանքը»:

Շմիդտի հաղորդումը լսեց Ուելեն հրավանդանի ռադիստը: Նա շտապ հաղորդեց այն Կամչատկայի Պետրոպավլովսկ նավահանգիստը: Պետրոպավլովսկը հաղորդեց Խաբարովսկի, Խաբարովսկը՝ Մոսկվա:

Այդ ժամանակ Մոսկվայում կառավարական հանձնաժողովը կարգադրեց ռադիոյով— Բեկեռային կայարաններում պատրաստել ողանավերը: Թուշել Շմիդտի ճամբարը հենց վոր բուքը դադարի: Տեղափոխել ցամաքի վրա արշավախմբի մասնակիցներին:

Շմիդտի ճամբարի ավազ ռադիստ՝ Կրենկելը չհեռացավ ապարատի մոտից: Ականջափողերով նստել էր նա:


Թեև դեռ ցերեկ էր, բայց մութն էր. ցերեկվա փոխարենն տիրում էր բեկեռային գիշերը: Տարածության մեջ նա լսում էր ձայներ Ամերիկայից: Հանկարծ նա լսեց, վոր խոսում է Ուելենի բեկեռային կայանը:

«Պատրաստում ենք ողանավերը: Ուղարկում ենք փրկող արշավախումբ՝ ջսան լուծ շներով: Շնասահնակների վրա գնում են չուկչիները: Կայաններում կազմակերպում ենք շնակերի մթերում: Մորիլիզացիայի յենք յենթարկում յեղջերուները»:

«ԱՆՁՆԱՏՈՒՐ ԶԵՔ ԼԻՆԻ»

Շմիդտի ճամբարում կային ատաղձագործներ և վառարանագործներ:

Ատաղձագործները կառուցեցին 50 մարդու համար վալյտաչեն խրճիթ: Վառարանագործները նրա մեջ չինեցին յերկու բուխարիկ: Խրճիթը տաքացավ: Այդ ժամանակ վրանից խրճիթ տեղա-





փոխեցին կանանց, յերկու յերեխա և ամենից թույլ ընկերներին: Պատուհանները շինեցին լուսանկարչական ապակուց: Կառուցեցին բրեզենտյա խոհանոց, փուռ, լվացքատուն:

Բայց գլխավոր աշխատանքը ազդանշանի համար բուրգ կառուցելն էր: Վորպեսզի փրկող արշավախումբը կարողանար գտնել ճամբարը, անրողրոմ կառուցելը, վորպեսզի փրկող արշավախումբի ողանավերը կարողանան գետին իջնել:

Աերողրոմի հրապարակը պատեցին ազդանշանի դրոշակներով: Յերեք հերթապահներ նստեցին անրողրոմում՝ վրանի մեջ, ողանավերին սպասելու և յերևալու դեպքում ծխով ազդանշան տալու համար:

Այսպես հինգ որ ապրեցին չեկոսկինյանները: Հինգ որից հետո յերերուն սառցադաշտի վրա, Չուկոտյան ծովում, հանկարծ հայտնվեց պատի թերթ: Սառցային պատի թերթի առաջին համարը կոչվում էր— «Անճնատուր չենք լինի»:

ԴՐՈՇԷ՝ ՃԱՄԲԱՐԻ ՎՐԱ

Կարծիր բանակի տարեգարձին չեկոսկինյաններն ավարտեցին ազդանշանի բուրգի կառուցումը: Նրանք բուրգի վրա բարձրացրին խորհրդային նավատորմի դիրժը:

Յերեսուն մղոնի վրա դրոշը յերևում էր: Բայց վոչ վոք չեր տեսել այն, վորովհետև շուրջը սառույց էր ամայի և բեռային գիշեր:

Վոչ վոքի տեսանելի չեր յեղել: Բայց չեկոսկինյաններն այդ դրոշի տակ, սառույցի վրա, Չուկոտյան ծովում տոնեցին Կարմիր բանակի ու նավատորմի դիր տոնը:

ԴՐԱԴՈ՛ ԸՆԿԵՐ ՍՍԱԼԻՆԻՑ

Սառույցը ճոճոճ էր: Սառույցը տանում էր հյուսիս-արևելք: Դժվար էր սառույցի վրա մնալը: Մութն էր, ցուրտ: Ողանավերը չեկան չեկոսկինյաններին տանելու: Բայց փետրվարի 27-ին տեղի ունեցավ մեծ ուրախություն:

Ավագ ռադիստ Կրենկելը նստել էր ապարատի մոտ: Նա ուշադիր լսում էր և գրում թերթի վրա՝ Մորգեյի այբուբենով: Հանկարծ նա լսողությունը լարեց: Նա անհանդիստ կերպով գննեց: Գոնե լսեյի... Գոնե հաղորդումը չկտրվեր... մտածում էր նա:

Ինչ վոր մեկը ասում էր—մի գուցե կարևոր հաղորդում լինի: Մի գուցե ողանավն են նորոգում... Վոչ, ողանավը ամսի 18-ին են նորոգել: Մի գուցե յեղանակն է պարզում...:


Բայց իրոք այդ ընկեր Ստալինի և կառավարության անդամների ռադիոգիրն էր, վոր ստացվեց Չուկոտյան ծովի սառույցների վրա: Ռադիոգրի մեջ ասված էր.—

«Բուլչևիկյան վողջույն հերոս-չեկոսկինյաններին: Բուլոր միջոցները ձեռք ենք առնում ձեզ ու ժանդակություն ցույց տալու համար»:

«ԱՆՏ-ՁՈՐՍԸ» ՑԵԿԱԿ

Փետրվարի 20-ին Ուելլեն հրվանդանից հաղորդադրություն ստացվեց թե՛ «Ողաջու Լյապիդևսկին «ԱՆՏ—4» ողանավով թուով դեպի ճամբար»:

Այդ ժամանակ ըստ ցուցակի առաջինները՝ տասը կին իրենց յերեխաներով հավաքվեցին և գնացին դեպի անրողրոմ: Յերե-





խաներին տեղափոխեցին ինքնադործ սահնակներով: Կանանց հետ գնացին յերեսուն ճամբու գցողներ:

Բայց ողանավը չեկավ:

Կես ժամ հետո ազդանշան տրվեց ճամբարից թե՛ «Յետ յեկեք»: Ռազիոյով իմացել էյին, վոր ողանավը չի կարողացել տեղ հասնել քամու պատճառով:

Մի քանի օրից հետո դարձյալ ռազիոգիր ստացվեց «Թըռավ»: Դարձյալ գնացին: Նայում էյին յերկինք: Ականջ էյին դնում: Սպասում էյին: Վոչինչ չէր յերևում յերկնքում: Մեքենայի ձայն չէր լսվում:

Անցավ յերեք ժամ: Մթնեց: Վերադարձան: Գիշերը Ուելլեյից ռազիոյով ասացին, վոր «ԱՆՏ-4» ողանավը թռել է ժամը 7 և կեսին, բայց չի կարողացել գտնել ճամբարը:

Վերջապես մարտի 5-ին ստացվեց ռազիոգիր՝ թե 9 ժամ 15 րոպեյին «ԱՆՏ-4»-ը թռավ ճամբարը:

Այդ ժամանակ չեյլուսկինյանները յերրորդ անգամ շարժվեցին դեպի աերողրոմ: Սառնամանիքը 40 աստիճան էր: Յերեսնաներին տեղափոխեցին յերեսները ծածկած: Յեվ հանկարծ ճանապարհին տեսան յերկնքում թռչում է ողանավը: Բոլորը կանգ առան: «Ուռա» ազդակեցին: Վազեցին: Բայց պարզվեց, վոր աերողրոմի առջևի սառույցը ճաքել էր և ճեղք էր բացվել:

Պետք էր վերադառնալ ճամբար՝ մակույկ բերելու: Պետք էր յերեք կիլոմետր տարածութուն, սառույցի մեջ, ձեռների վրա բերել մակույկը: Այդ միջոցին ողանավի վրա գննող-ողաչու Պետրովը և բորտմետանիկ Ռուկովսկին ծխի ազդանշան տեսան աերողրոմի հրապարակի վրա:

Ողանավը յերկու պտույտ կատարեց: Յերեք չեյլուսկինյաններ ձյունի վրա մուգ գույնի կտորից փռեցին մի խոշոր «Տ»

տառ: Այդ նշանակում է՝ կարելի չէ իջնել: Ողանավը իջավ: Կարինից դուրս յեկավ ողաչու Լյապիդուսկին: Նրա յերեսը ծածկված էր մորթուց պատրաստած դիմակով, վորպեսզի չսառի: Ողանավը ճամբար էր բերել ակումուլյատորներ՝ ռազիոյի համար և յեղջերույի թարմ, յեփած միս:

ՍԱՌՈՒՅՑԸ ԶԵՂԲՎՈՒՄ Ե

Կանայք և յերեսները թռան: Ճամբարում մնացին 89 հոգի: Մարտի 6-ի գիշերը հանկարծ սառույցները սղձվեցին ու սահեցին: Չեյլուսկինյանները քնած էյին: Այդ միջոցին փայտաչեն խրճիթի տակ սառույցը շարժվեց: Կրակարանն ընկավ ու մարեց: Խրճիթը ճոնչաց ու կիսով չափ ճեղքվեց: Խրճիթի մեջտեղում յերեսաց լայն ճեղքվածք, իսկ ճեղքվածքի արանքում ծովն էր:

Վոչ վոր չաղաղակեց ու դես ու դեն չընկավ: Վոչ վոր չընկավ ճեղքվածքի մեջ: Ամեն ինչ պատրաստ էր. չեյլուսկինյանները բաց արին պահեստի դուռը և դուրս յեկան սառույցի վրա:

Սուսլոտյան կարիք յեղավ խրճիթում դնել նոր պատեր: Պետք էր ամբողջ ճամբարում քայլել վտանգը միշտ նկատի ունենալով և զգուշ նայել վտոքերի տակը, իմանալու ձյան տակ ճեղքվածք չկա՞ր դեպք: Չի՞ փլչում արդյոք Չուկոտյան ծովը:

Բայց գլխավոր դժբախտութունն այն էր, վոր ճաքել էր աերողրոմի սառույցը: Չեյլուսկինյաններն ողանավերի էյին սպասում: Իսկ տեղ չկար, վոր իջնեյին ողանավերը: Այդ ժամանակ դահուկավորների բրիգադը բահեր ու նիզեր վերցրեց և գնաց սառցադաշտի վրա նոր հրապարակ փնտռելու:





ՃԱՄԲԱՐԻ ՈՐԵՐԸ

Շմիդտի ճամբարում որը սկսվում էր առավոտյան ժամը 6-ից: Ժամը 8-ին նախաճաշ էր լինում:

Գլխավոր աշխատանքը աներողրոմի հարդարելն էր, վորովհետև յեթե հրապարակը հարթ չլինի, ողանավերը իջնելու կշարդվեն:

Գիտական աշխատողներն ուսումնասիրում էին յեղանակը և քամիները, ծովային հոսանքները և սառույցների շարժումը, վոր վհետև Շմիդտի արշավախումբն իր առջև խնդիր էր դրել՝ ուսումնասիրել խորհրդային յերկրի համար Հյուսիսային Մովսային ճանապարհը:

Չեկյուսկինյաններն ունեյին մատեմատիկա և ոտար լեզուներ ուսումնասիրող խմբակներ:

Վրաններում մշակում էին ընկեր Ստալինի զեկուցումը: Վաւում էին իրենց ձեռքով շինված կրակարանները: Ծխում էին բուխարիկները: Բրեզենտյա պատերը ֆոֆում էին քամուց:

Մի անգամ հանկարծ վորոշեցին մրցման դուրս գալ ամենամաքուր վրանի համար:

ՄԱՅՐ ԱՐՁԸ ԿԵՐԱՎՊՐՈՇԱԿԸ

Բուք էր ու մշուշ: Սառույցը քշվում էր դեպի հյուսիսարևմուտք: Մի մեծ սպիտակ մայր արջ յեկավ աներողրոմ իր քոթոթի հետ: Նա սոված էր: Կերավ ազդանշանի դրոշակը և ծխախոտի մի քանի մնացորդներ:

Հետո նա ուզում էր մտնել հերթապահների վրանը: Բայց մտորիստ Պողոսովը սպանեց նրան: Արջի միսը հանձնեցին խուհանոց: Չեկյուսկինյանները վաղուց էր թարմ միս չեյին կերել: Արջի ստամոքսից դուրս յեկավ դրոշակը:

ՈՒՐԱՆԱՎԵՐՆ ՈԳՆՈՒԹՅԱՆ ԵՆ ԳԱՆԻՍ

Վերջապես յեկան ողանավերն ու ողաչուները: Յեվ մի անգամից չորս որում հինգ ողանավ բոլոր չեկյուսկինյաններին հանեցին սառույցներից: Նրանք շտապում էին, վորովհետև յեղանակը կարող էր փչանալ, կարող էր ճաքճքել հրապարակը և ցրվել սառույցը:

Ընդամենը տեղի ունեցավ քսանչորս թուիչք:

Ամենից դժվար թուիչքը առաջինն էր: Գիշերվա ընթացքում հրապարակը ճաքում և կարճանում էր: Չեկյուսկինյանները չկարողացան մաքրել այն: Սլեպնեի մեքենան վաղելով հրապարակում ընդհարվեց սառցակույտին: Նա ջարդվածքներ ստացավ և կարիք յեղավ վերանորոգել այն:

Ապրիլի 11-ին ողանավերը ցամաք տեղափոխեցին յերեսունհինգ մարդ:

Այդ որը ողաչու Մորկովը կատարեց չորս թուիչք: Չորրորդ անգամին նա թռավ մթության մեջ: Նրա ողանավը յերկու տեղանի յեր, բայց նա ողանավի մեջ վերցրեց հինգ մարդ, վորպեսզի կարողանա փրկել ամբողջ ճամբարը: Նա մեկին տեղավորեց ողանավասենյակում, իսկ մնացածներին մետաքսե պարաշյուտների մեջ կախեց ողանավի թևերի տակ, վորպեսզի նրանք չսառնեն:

Սլեպնեի ողանավը ճամբարից վերցրեց արշավախմբի պետ Շմիդտին: Շմիդտը թռավ անկողնի մեջ փաթաթված, վորովհետև հիվանդ էր թոքերի բորբոքումով: Նա հիվանդ էր, բայց չէր ու-





զում թուշել ճամբարից: Նա ուզում էր սպասել, մինչև վոր բոլոր
 չեկյուսկինյաններն ափ տեղափոխվեն: Նա ուզում էր վերջինը
 թուշել ճամբարից: Այդ ժամանակ կառավարական հանձնաժողովը
 վր Մոսկվայից հրաման ավեց ուղարկել Շմիդտի ոգնական Բոր-
 րովին թե՛ «Շմիդտին անմիջապես հանել սառույցներից»: Շմիդտը
 յենթարկվեց հրամանին: Նրան տեղափոխեցին Ամերիկայի ամե-
 նամոտ Նոմ քաղաքը, վորտեղ հիվանդանոց կար:

Վերջին ԶԵԼՅՈՒՍԿԻՆՅԱՆՆԵՐԸ

2 Եկյուսկինյաններն ապրեցին սառույցի վրա յերկու ամիս:
 Ապրիլի 12-ին վերջին գիշերն էր: Սառույցի վրա մնացել էին
 վեց մարդ:

Սառույցը ճոճուում ու շարժվում էր: Բայց չեկյուսկինյաննե-
 րը պահեցին քնելու, վորովհետև նրանք վաղուց չէին քնել:
 Միայն նավապետ Վորոնինը չպահեց այդ գիշեր:

Վրանում վառվում էր լապտերը: Վորոնինը վառեց պրիմու-
 սը և թեյ յեփեց իր համար: Հետո նա լվաց ամանը և վրանը
 կարգի բերեց: Մովսիսյան բնակիչների սովորության համաձայն
 նա ուզում էր ուտելիքի պաշար և իրեր թողնել վրանում. գուցե
 յերբեկեց մի մարդ կընկնի այս սառույցների վրա, սարսափելի
 ու դժվար կլինի նրա համար և հանկարծ կտեսնի, վոր ինչ վոր
 մեկը հոգացել է նրա մասին:

Ապրիլի 13-ի լուսադեմին ուղիստները հաղորդեցին, վոր
 յերեք ողանավ թուել են դեպի սառույցները:

Այն ժամանակ նավապետ Վորոնինը պինդ փակեց վրանի
 մուտքը, վորպեսզի սպիտակ արջը չմտնի այնտեղ ու չվռնչացնի
 պաշարը:

Նավապետ Վորոնինը փակեց մուտքը և հանկարծ հիշեց, վոր
 գլխարկը մնաց վրանում: Կարիք յեղավ պոկել տախտակը: Գլը-
 խարկը վերցրեց, յերկրորդ անգամ պնդացրեց մուտքը— հան-
 կարծ բանից դուրս յեկավ մոռացել է թաթմանները: Այսպիսով
 նավապետը ստիպված յեղավ յերեք անգամ բանալ ու փակել
 վրանի մուտքը:

Այդ միջոցին ճամբարի վրա յերևացին յերեք ողանավ: Չեկ-
 յուսկինյանները վառեցին նավթով լի տակառը և վառող պայ-
 թեցրին:

Այն ժամանակ ողանավից տեսան ծուխի մեծ ազդանշան: Ո-
 դանավերն իջան:

Թուշելուց առաջ վեց չեկյուսկինյանները ուղարկեցին վերջին
 ուղիտ-գիրը.—

«Թողնում ենք Շմիդտի ճամբարը: Ռադիոկապը
 կտրում ենք»:

Ողանավերը հրաժեշտի պտույտ գործեցին:

Նրանցից ներքև, Չուկոտյան ծովում, բուրգի վրա, սա-
 րույցների մեջ, բարձրացել էր խորհրդային դրոշակը:




10923976
 34806



ՍՈՑԻԱԼԻՏԱԿԱՆ ՀԱՅՐԵԼԻՔԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔՈՒՄ

Չեկոսլակների հերոսներին վանկարեմից տեղափոխեցին Վլադիվոստոկ: Փրկւթյան կառավարական հանձնաժողովի վորոշումով հատուկ գնացք տրամադրվեց «Չեկոսլակների» հերոսներին Մոսկվա ուղարկելու համար: Վլադիվոստոկից մինչև Մոսկվա աշխատավորութունը հերոսներին փախադրող գնացքը ղեկավարում էր ծաղիկներով, նվագախմբով, անսահման խանդավառությամբ: Հերոսների Մոսկվա հասնելու որը համամիութենական մեծ տոն էր. Մոսկվայի աշխատավորութունը չտեսնված ընդունելութուն սարքեց խորհրդային արկտիկան նվաճելու համար պայքարող գիտական աշխատողներին և հերոս ողաչուններին: Յեղավ մեծ գորահանդես, տանկերի, ոդանավերի մասնակցությամբ: Իրենց յելույթներում «Չեկոսլակների» հերոսները խոստացան վոչ մի րոպե չդադարեցնել իրենց գիտական աշխատանքը, վերսկսել այն նոր թափով: Իսկ հերոս ողաչունները խոստացան իրենց ամբողջ փորձը ոգտադրածել սոցիալիստական շինարարության և սոցիալիստական հայրենիքի պաշտպանության համար: Կառավարութունը «Չեկոսլակների» հերոսներին և ողաչուններին պարգևատրեց զանազան շքանշաններով և ուղարկեց սանատորիաներ հանգստանալու համար:

1901
1902





№ 50 ч.



ЧЕЛЮСКИН
гиз. ССР А ЭРИВАНЬ

« Ազգային գրադարան



NL0143466

16658